


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պայուսք հմր. 40 ՄՅՃ.
Պայուսք հմր. 2 լիտր
Վեցամս. և Պայուսք 3 ՄՅՃ.
Պայուսք հմր. 1 լիտր
Օտար երկիրներու 50 ՏՐ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :
Խրաքանչիւր թիւ 40 փարս արծ :



ԼԵՐԱԳԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս և հաշիւ լրագրաց ծանու-
ածաբար Խրագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ ծանու-
ածաբար և կից գրութիւն խնայելի
— Տնօրէնին պիտի ուղարկուի, զարա-
թիւս Խնայողը քաղաքի ծառայողի թիւ
198, և օրո խան, Կառնի գրասեն-
եակը :

Հանրու ծախքը չիմարում նա-
մակ չընդունուիր :

Չապուած ծառայող, յողում, եւ
եւ չիւն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՀՈԿՏԵՐԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգղիական լրագրերը Սըր Հ. Լէ-
յարտի կողմէն Բ. Դրան տրուած ազ-
դարարութեան վրայ կը խօսին, որոց
քաղաքական հեռագրական լուրերուն
մէջ հրատարակած եմք, ինչպէս
վերջին կապուած տետրակէն ալ կը
հասկնուի, Անգղիա կը պահանջէ
որ փոքր Ասիոյ մէջ խնամարմա
կոչուած ոստիկան զինուորութիւ-
նը կազմելու համար Անգղիացի
սպայներ դործածուին, հիւսա-
տանքը բարենորոգմանց դործադ-
րութեան համար տեղական պաշտո-
նատարաց դործակցին, և դատա-
րանաց վրայ հսկող Անգղիացի քնն-
նիչներ կարգուին : Այս առաջար-
կութիւնները Բ. Դրան կողմէն բացէ
ի բաց չեն մերժուիր, և Մօնթէօր
տիւ Բօմբէր Թուրք լրագրաց կար-
ծիքը հերքելով կըսէ թէ՛ նախարա-
րաց խորհուրդն որոշեւ է դործադ-
րել նախ՝ Բ. Դրան կարեւոր համա-
րած բարենորոգումներն և երկրորդ-
դաշնագրութեանց համաձայն կայ-
սերական կառավարութեան ընդու-
նած բարենորոգումներն : Եթէ այս-
պէս է, բոլորովին անտեղի էր ներ-
կայ վիճակը քաղաքական տագնապ
կոչել, Անգղիա բարենորոգումներ
կը պահանջէ, Բ. Դրան կը խոստա-
նայ դործադրել, և տագնապ չիմար-
բայց պէտք է տեսնել թէ այս դոր-
ծադրութիւնն Անգղիոյ պետական
մարդիկը դո՛ւր ընելու կերպիւ պիտի
լինի, թէ դարձեալ « ազմուկ բա-
զում վառն ոչնչի » պիտի լինի ըստ
Շէքսպիրի հռչակաւոր կատակերգու-
թեան, կամ լեւն երկունք պիտի կը-
րէ չնչին կենդանի մը ծնանելու հա-
մար՝ ըստ Ուրաուսայ առածին : Ամեն
անոնք որք Սալիսպրի Մարքիզին
1878 օգոստոս 8ի ծանուցողիքը կը
լիչեն, որոց մէջ պահանջուած էին
արդէն վերջիշեալ ամեն բաները,
կրնան մակաբերել որ այն ատեն Բ.
Դրան առաջարկած բարենորոգումնե-
րն իսկ անգործադրելի մնային :
Կ'ըսուէր թէ երմտական վիճակին
անձկութիւնը չ'ներբր բարենորոգ-
մանց դործադրութեան ձեռնարկելը,
և Անգղիա ստիպողականութիւն չի
դործ չէր գնէր : Սալիսպրի Մար-
քիզը դեռ քանի մ'օր առաջ Ման-
չէսթէրի մէջ խօսած ատենաբանու-
թեամբ կը յայտարարէր թէ Թուր-
քիա բարենորոգմանց պէտք չունի
Անգղիոյ պաշտպանութիւնը վայելե-
լու համար : Ինչէն յաւաք կուգայ
ուրեմն բարենորոգմանց համար այս
յանկարծական օրհասարկութիւնն
արդեօք Կ. Պօլսոյ մէջ նախարարաց

վերջին փոփոխութեան վրայ Անգղի-
ոյ աշխարհավարութիւնը փոխուե-
ցա՞ւ, կամ Աւստրո-Գերմանական
համաձայնութիւնը նոր ո՞ր մը առ-
աւ Անգղիոյ : Բայց այս իրողու-
թիւնները լրա Սալիսպրի վերջին
ատենախօսութեան ժամանակ կային :
Ինչ որ լինի պատճառն, որոյ վը-
րայ դուցէ Անգղիական թերթերը
տակաւ առ տակաւ կրնան անդեկու-
թիւն տալ, Անգղիոյ այս նոր շար-
ժումն Արեւելոյ մէջ իւր ճշմարիտ շա-
հուց համաձայն է : Եւ ժամանակէ
ի վեր Անգղիոյ բոլոր խրատներն ա-
պարդիւն մնացած էին : Եթէ քսան
տարիէ ի վեր հրատարակուած կա-
պոյտ տետրակներն աչքէ անցունելը,
կրնամք տեսնել որ խրատներ պակ-
սած չեն : Խրատները դեռ պահ-
միշտ Բ. Դրան Մենարտութիւն կը
նէր, և իւր յորդորները շատ անգամ
Անգղիոյ արտաքին գործոց նախա-
րարութեան ծանուցողութիւնը կը հա-
մեմուէին : Եւ ապա արարութիւնը
եղան, շատ թուղթեր միտնեցան,
շատ ճառեր խօսուեցան, և եթէ կա-
պոյտ տետրակաց հատորները հաւա-
քին, մեր Այսմաուրքն անոնց քով
փոքր գրքիկ մը կը մնայ : Ասոնց ա-
մենը չկրնան առաջն առնուլ, ո՛չ
ներքին անբարենորոգման, ո՛չ Հէրսէ-
քի և Պօլսոյի պաշտպանութեանց,
ո՛չ Պօլսոյի շարքերուն, ոչ ալ վեր-
ջին արեւմտաւոր պատերազմին : Անգ-
ղիոյ նոր մէկ կապուած տետրակն ալ
հրատարակեցաւ, որոյ քանի մը գը-
լաւոր գրութիւններն օրինակեցինք :
Դարձեալ նոյն աղբարարութիւնները
գուցէ առաւել ազդու լեզուով, և
միշտ միևնոյն արդիւնքը : Անգղիա
բարենորոգմանց գործադրութիւն
կը պահանջէ, բարենորոգումները
չեն դործադրել, հետեւաբար նոր
ծանուցողութիւն կը դրուին առաջն-
ներուն վրայ աւելնալու համար :
Կարծեմք այս ընթացքն Անգղիոյ հա-
մարումն ու աղբարարութիւնը պահե-
լու և իւր շահերը պաշտպանելու
լաւ միջոց չէր, քանի դժբաղդա-
ւար մարդկային իրաց մէջ առանց
գործի դուռ խօսքն արդիւնք չունի :
Անգղիա արդեօք դործնական շրջանի
մը մէջ մտած է, չեմք զիտեր. ան-
շուշտ քիչ օրէն կրնամք տեսնել իւր
այս անգամի աղբարարութեանց եղ-
րակացութիւնը :

Երբեմն սուտեր կան որք խիստ
հեռաբերական են, և նոյն իսկ ճշ-
մարտութեանէ աւելի ուղեգրութիւն
կը դրան : Հետեւալ հատուածը,
զոր Գաղղիական Սօյէլի լրագրոյ մէկ
քաղաքական տետրակները մէջ կը
տեսնեմք, կրնայ աղայացի մը համար-
ելոյ այս ճշմարտութեան :

« Միւս կողմէն, կրնէ յիշեալ
թերթը, փոքր Ասիոյ Հայերն ալ

Պիքոնֆիլտի խոստումներէն յուսա-
բեկ լինելով, պատուիրակ պատուի-
րակի վրայ կը զրկեն Բեդրսպուրկ-
դիւանագիտական միջամտութիւն մը
և Պիքոնֆիլտի դաշնագրին մէջ արձա-
նագրեալ քանի մ'երաշխտարարութեանց
անկեղծ գործադրութիւնը պահան-
ջելու համար : Հայկական խնդիրը
հաղորդ մէջ կարծուած էն աւելի յը-
ղի է փոփոխութիւնը : Ուստի կը ի-
ւանագիտութիւնն այդ չորս հինգ
միլիոն ժողովուրդն ապստամբութեան
չմղելու համար, հանգարեցնելու հա-
մար շատ կը հօգիտ : Բայց ինչ դե-
ղեցիկ պատրուակ պատերազմի եթէ
պատրուակ մը փրկարեւել ուղի :
Անկախ հանրապետութիւն մը՝ ընդ-
Ուստի հայկական հայտնաբերութեան, Ա-
րեւելեան Ձվիցերիա մը, Ասիական
Պիքոնֆիլտ մը, առ այսմ' պայտէս է հայ
հայրենասիրաց երազն, որոց գլուխը
կը դառնուի հաղուադիւս խելքի տէր
մարդ մը՝ Խորէն Նար— Պէյ արքե-
պիսկոպոսը : »

Վերջին կապուած տետրակին վը-
րայ, որոյ ամենակարեւոր մասերն ար-
դէն հրատարակեցինք, անգղիական
լրագրերն ուշադրութեան արժանի
յօդուածներ կը հրատարակեն, որոց
գլխաւորներն հետզհետէ մեր ընթեր-
ցողաց ներկայել անօգուտ չեմք հա-
մարիր :

Տէյլի Նիւզ լրագրին, ընդգրմա-
դիր կուսակցութեան իրքեւ ամենա-
մեծ թաղամասն հետեւեալ յօդուածը
կը հրատարակէ հոկտ. 24 թուոյն մէջ :

« Փոքր Ասիոյ և Սուրիոյ վիճակին
նկատմամբ վերջերս հրատարակուած
կապուած տետրակը Մանչէսթէրի մէջ
Լորա Սալիսպրի ըրած բանախօսու-
թեան քանի մը հատուածները կը
բացատրէ, որք լուսաբանուելու պէտք
ունէին : Որտեքն որ ուր ոչ նախարա-
րը շարքի մ'առաջ ըստ թէ վերա-
նորոգեալ Թուրքիոյ մէջ Ուստի
ոտնագրութեան դէմ պատուար մը
դառնելու մասին իւր ունեցած յայն
անհետացած է : Թէ ինք կը փախնայ
որ Սուրիոյ և իւր խորհրդատու-
ներն այնպիսի ընթացիկ հետեւին,
որք իրենց կորստեան միայն կըր-
նան յանդիւլ : Լորա Սալիսպրի վեր-
ջագէս հարկադրուած է ընդունել
թէ Թուրքիոյ արդի կառավարու-
թիւնը կազմուած ժողովեան պողոտա-
յին վրայ կը դառնուի, և թէ կորքն
չելու դատաւարարուած է ո՛չ թէ օ-
տար թշնամաց մը կողմէն արուելիք
մահացու հարուածէ մը, այլ իւր յո-
ւումեան հետեւանքն և ինքնին քայ-
քայմամբ : Կ. Պօլսոյ նախարարական
փոփոխութիւնն որ Մանչէսթէրի մէջ
Լորա Սալիսպրի բանախօսութիւն
ընելէն յետոյ ծանուցուեցաւ, տա-
րակցոյ չկայ թէ զինք պիտի հաստա-
տէ իւր արդի համարման մէջ, պիտի

դէմ ընդ երկար մարտնչեցաւ՝ երբ
ամեն մարդ արդէն համոզուած էր :

« Սուրիոյ և անոր փաշանե-
րուն վրայ Լորա Սալիսպրի ունե-
ցած մեծ հաւատքին վերապէս ան-
հետանալը ջերմ դարմանում չկրնար
պատճառել ամեն անոնց, որք փոքր
Ասիոյ բարենորոգմանց նկատմամբ
Սըր Հէրի Լէյքըրի վերջին բանակ-
ցութեանց պատմութիւնը կապուած
տետրակին մէջ կարգադրած են : Դեռ
պահին դրութիւններէն երեկ քաղ-
ւած մը հրատարակեցինք, Այդ դը-
րութիւնը բացարձակապէս նոր կամ
անյուսարի բաներ չեն պարունակեր :
Նոյն պատմութիւնը կը կրկնեն նոր
միջադէպերով : Անոնց կարեւորու-
թիւնը գլխաւորապէս յայտն կը կա-
յանայ թէ այս կրկնութիւնը վերջա-
պէս աղբարարութիւն մ'ըրած է մեր
արտաքին գործոց նախարարին մտ-
քին վրայ, որ անհատական վիճակ
մ'ունեցած կը լինէր, եթէ Սըր Հ.
Լէյքըրի վերջին անպատեհ ջանքե-
րէն դուս մը չառնուր : Երբ Թուր-
քիոյ հետ մեր պայմանագրութեան
ստորագրութիւն յետոյ տարի մ'ան-
ցած էր և Սուրիոյ յանձն առած
պարտականութիւնները կատարելու
համար բան մը չէր եղած, Սըր Հ. Լէ-
յարտ ջանք մ'ընելու հարկն անգամ
մ'եւ աղբարարեց Մեծ Եւրոպա-
ոյն : Դեռ պահը շատ բան չէր խնդրել :
« Միայն, կրնէր, սկզբնաւորութիւն
մը լինի նահանգի մը մէջ, որպէս զի
հասկնուի թէ Գուսնի իրադէս կը
փախուրի բարենորոգում գործադ-
րել » : Մեծ Եւրոպայոսն ապնաւորու-
թեամբ ընդունեց սոյն առաջարկն :
Ըստ թէ ընդունեան նիւթ ըրած
էր ո՛չ թէ միայն մէկ այլ երեք նա-
հանգի մէջ բարենորոգում գործադ-
րելու գործն, և թէ այդ նահանգաց
փոքրութեան կատարելապէս բարե-
նորոգման համար ծրագիր մը պատ-
րաստած էր, որ ի մտայ գործադ-
րութեան պիտի տրուէր : Յապաղ-
ման համար իւր միակ պատճառը դը-
րամի պէտքն էր : Խայրէտարին փա-
շան՝ այս դեղեցիկ յայտն ընելէն
քանի մը շաբաթ ետքը պաշտօնակ
եղաւ, և անկից ի վեր նախարարու-
թեան ուրիշ փոփոխութիւն մ'ալ տե-
ղի ունեցաւ, որուն արդիւնքն եղաւ
... յետագլխաւոր պաշտօնատար-
ներով շրջապատել զՍուրիոյն » :

Վաղ ըմ լրագրերը գրած լինելով
թէ Անգղիա յայտնի թշնամութիւն
մը պիտի ցուցնէ Թուրքիոյ դէմ,
Մօնթէօր Տիւ Բօմբէր Անգղիոյ կառավա-
րութիւնը կը փախուրի Թուրքիոյ
հետ բարեկամ մնալ և անոր օգնել :
Բայց այս բարեկամութեան ու օգ-
նութեան իրքեւ զին՝ Բ. Դրան դաշ-
նագրութիւններն և կատարելաբար



ՋԵՐՄԻ ԴԵԿ

Տոբթի Ս. Երկրի շերտի գեղը ա. մեն ու իր անասան շերտի իսկոյն կը բռնէ. չկայ դեղ մը որ ասոր չափի օգտակար ըլլայ շերտի. շերտ բռնող, ներք պարսպ տեղը կը տանջուին քա. նի որ աս դեղը կայ, պէտք է որ ան միջոցէն անկէ գործածեն: Արդէն Պօլսոյ և դաւառներուն մէջ ճանչցը. ւած է ա. դեղը ու անով բռնողները զիտեն անոր յարդը: Նախ ուրիշ տրամի չափ հէշտ է-դէ խմելու է իւր և մաքրողական դեղ ու ետքը աս շերտի դեղէն (շերտը չբռնած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի դրդալ շուրի հետ խառնելով խմելու է, ան միջոցէն կանգնի: Տղայոց աւելի քիչ տալու է. կը ծախուի Կ. Պօլսոյ Ղա. լաթիս Միւնստան և ընկերաց Ամե. ըրկայի մօտաւոր:

ՏՕԲԹԷՕՐ Մ. ՄԱՐԳԻ

Վիեննա մէքթեպինտէ Տիւրօմա արմիշ վէ պուննա սէնէլէրաէն պէրու. կէրէք իւրօքա վէ կէրէք Ասիլիմանէ. տէ. քէսպը շէօնէլէթ իթմիշ օլան Տօքթէօր Մարքի պու տէֆա Օրթա. քէօյտէ. քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 6ա դատար խաթա դապուլ իտէճէկի վէ սաաթ 7ա 9ա դատար տախի դալաթաւա Սանադգըլար իշինտէ Պաղչէվան օղլու 39 նումէ. րօլու էնդալսանէսինտէ պուլունա. ճադ տըր, վէ հէր չարչամպա վէ բա. դար կիւնէրի տախի Օրթա. քէօյտէ Տէ. րէ իշինտէ Ն. 119 Ուսթիճէն էնդա. խանէսինտէ սապահաւան սաաթ 6ա դատար Փաքիլ խաթաթէլի մէճնա. նէն դապուլ իտէճէք տիւր:

Միւնստան Տօքթէօր արմիշ. լըգ վէ ճէրաշըլըդատ մէհարէթի ֆէլիշլատէ օղլու, բաշիմ իւֆիւ. նէթի, կէօյիւս վէ տէրի խաթաթիւր. լէրի վէ ֆրէնիկի վէ պունտան դալ. մա կէօղ դուլադ. վէ պուրուն վէ պօղաղտա պուլունան եարէլէրի վէ վիճուտա օլան էէլլէրինի նէ դա. տար էսիլի օլաւ աղ վաղըլ դարֆըն. տա տէֆ իտէճէկի, վէ պէլ սօղուդ. լուղունու տախի էսիլի վէ էէնի քէն. տի իճաւ իթմիշ օղլուղու պիւր ա. լաթ իլէ օն տէֆատա տէֆ իտէճէ. կինի բաղպէթլու աշալիլէ իլան ի. տէր:



Միշտ կը հաստատէ ինքնին իւր մազին բնական զօրացուցիչը:

Վիւաւոր Միւնստանը (Մաղաղան) է—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Լոնդոն:

Կը ծախուի ամէն Վիւթթամալաճանէրէն, Լոն. շահաւ իւղալա. ճառներէն, և Լոնդոնի Վիւթթամալաճանէրէն:

Կ. Պօլսոյ Մ. Գանդիւք եղբայրք քոյի Ֆարմաի Պրիմանիք Բէրա Մէծ վաղոց և Լոնդոնի Գալիլէնայի քոյի, Անդ. զիտան միւնստան, Եիւ. քէ. Գալաղըլմ Գալաթիլա:

ԻՄԿԻՆԻՏԱՐ ԲԱՆԱԴ ՇԱԳԵՆԱՆԵՐԸ

Իմպերիալ	Կոմպերիալ	Իմպերիալ	Կոմպերիալ
ժամ	ժամ	ժամ	ժամ
1	7	1 45	8 30
4 30	8 45	4 45	9
2	8 35	2 45	9 30
2 30	9 45	2 45	9 50
2 55	9 35	3 10	10 10
3 30	10	3 45	10 35
4	10 25	4 45	11
4 30	10 45	4 40	11 20
5 5	11 5	5 15	11 40
5 30	11 25	6 10	11 50
6 45	11 40	7	12 5
	12	8	

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իմպերիալ	Կոմպերիալ	Իմպերիալ	Կոմպերիալ
ժամ	ժամ	ժամ	ժամ
	6 35		6 35
4 30	8	4 30	8 45
2	8 40	2	9 20
2 30	9 20	2 30	10
3 5	10	3 5	10 30
3 45	10 30	3 45	11 5
4 30	11	4 30	11 35
5	11 30	5	12 5
5 25	12	5 25	12 5
6		6	

ԻՄԱՐԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵՆ



ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երախայր ծնանքէն մինչ երեք տարեկան հասակը գրե. թէ շարունակ վորիցա. փորհարու. թիւն, սաամոքսի անհանգստութիւն, անքուն քնալ, չլային գրգռութիւն և այլն կունենան, մանաւանդ ալեւա հանելու միջոցին, և այս նեղութիւն. ներն ալ աւելի կը սաստկանան ամառ. ւան տաք եղանակին: Սուրբից Շի. րօքը վերոյիշեալ դժուարութեանց ա մանուն ալ առաջը կունեն ու կը բը. ժըլէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց: Գործածողները շատ դոհ են: Ուղղը կրնայ փորձել. գինն ա. ժան է. նորածին երախայի կաթի. լով կը արուի, վեց ամիսէն վեր եղ. զին օրը երեք անուշի գրգալ. կը ծախուի Կ. Պօլսոյ Ղալաթիլա Միւնս. տան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ՍՏԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մազերուն թափիլը չու. զեր, «Ս. Երկրի վիճօք» կոչուած մազի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մազի ջուրերը կամիւղերը, որ մազ չի թափելու հա. մար կը ծախուին, բարձր ալ անօղ ուտ են. իսկ վիճօքի օղ ուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պօլսոյ ու դաւառաց սէջ օր օրի գործածող. ներուն թիւր կաւելնայ: Անոնք որ իրենց մազերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գոր. ծածեն աս ջուրէն որ վերջոյ չղջան: Թափելու վրայ եղող մազերը կը հաո. տատեն ու կամրայնդէ, թափածնե. րուն տեղը մաղ կը բաւցնէ երբոր մազերուն տրամարը վնասուած չէ, ու ճերմկած մազերը անպատճառ. իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը չիւերուն հետն է. կը ծախուի Կ. Պօլսոյ Ղալաթիլա Միւնստան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:

ՓԱՐԻՉՈՒ ՏԻՆՉԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՐՈՍԱԿԱՆԻՍ 1878Ի

ՃՕՐՃ ԲՐԱՅՍԻ
(George Price)

ՃԻՆՉԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՒՆԵՐԱԿԱՆ ԵՐԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՊՈՊԱՆԱՆԵՐ

ԱՆՉԵՐԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՐՈՐԵՐ

(ԳՅՈՐ—ՅՈՐ)


Անգլանտի և Բաւարիայի աշխարհի ճիւղերէն Գիւլիլմի Գիւլիլմի

40 Տարեկան աւելի հաստատուած:

NEC PLUS ULTRA

Մանուշալ

ԱՐՈՒՆԵՐ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԵՐԱԿԱՆ



Գործարանապետ

Կրակի և վառօլի գինացոյ
Գալիլի անմատոյց
Խաբարի, ծախող և պատ. ուղ գործիչներու գէթ Լա. ցորճակապէս ապահով:

Անգլիոյ արդիւն Նաւարանի և Գրամա. տան ինչպէս նաև կաւալարական բոլոր գործարաններու և յարկերու յաւա. չնայն ու մասապարալը:

Յաւակոյն տակըցաց, գրամալիներու և այլ մասնաւորաց համար քննու. արդիւններ:

Այն գործարանին համար տնտեսաբանութիւն և Միւնստան ցարդ եղածներուն վէ. րայ ամեն կերպով դերաշնոյ լինելն անհամար վաճառքի և բաղաւթի միջոցով. ներք հաստատուած:

Ճօճ Գրայի արուած վաճառքներին հետեւեալ յաւալ կը բերեն, արդիւն հա. տարակաթեան դաւաղութեան թաղը:

ՅՈՒՆԱԼԻ ՀՐԳԵՆ

Ի ՈՒՅՈՒՆ ԵՆՆԵՐՈ

Տէր. — Իմ կարածները վերադին հրոյ ճարակ եղան և դժբաղդաբար տալա. հոված չէի ոչ գրգռելու և ոչ ապրանքներու: Մարայն ձեռնէ գնած Արիւղանուր բա. ցած ժամանակ տեսողութիւն և թղթերու ամբողջական անվնաս գաւայ, որուն հա. մար երախայրաբար եմ ձեռն:

Ձեր Արիւղանուրին ձեռք քովն ուրիշ մ'ալ կ'որ, որն որ Պ. Գօյն (Costes) գոր. ճարակէն եղած էր. այս վերջինին մէջ գտնուած տեսողութիւն և կարեւոր թղ. թերն ամենքն ալ այրած էին, միջոցէն ձեր Արիւղանուրն, որուն մէջ կը գտնուէր բացի տեսողութիւն և թղթերէ 10 լիպա (որ լիպէ 5 1/2 օխային աւելի) վա. ուղ, որ պահած էի հոն կաւալարութեան հետ տեղի ունենալը գործի մը իւր օրինակ:

Հրդեհէն երկու օր վերջը երբ Բալիլա ճարա ձեր Արիւղանուր թէ վառողը և թէ Արիւղանուրին ներքին կողմը բոլորովին անվնաս գտաւ. նա մանաւանդ վառ. զը, որ ձեռք մի և նոյն վիճակի մէջ էր ինչ որ էր հրդեհէն առաջ:

ՈՒՅՈՒՆ ԵՆՆԵՐՈ

Յ ապրիլ 1868

Աւելի ընդարձակ տեղեկութեանց և վաճառքներու վաւերացման համար, պէտք է գիտնալ որ ՅՈՒՆԱԼԻ ՀՐԳԵՆ ԱՐՈՒՆԵՐ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԵՐԱԿԱՆ գործարանները Տնտեսաբան և Պալատայի համար, Ատա խան թիւ 9, և կոմ առ Պ. Մ. ՊԱՆԱՆ, վաճառարան Ատա խան թիւ 1: